**ՇԱԽՄԱՏ 2 դասարան, 64 դասաժամ**

Նաիրա Նորայրի Մովսիսյան

2021-2022 ուս. տարվա թեմատիկ պլանավորում

«Շախմատ» առարկայի ուսուցման նպատակն է տարրական դպրոցի սովորողների մոտ խթանել որոնողական գործունեությունը՝ ուղղված փոփոխվող շախմատային իրավիճակներում կողմնորոշվելուն, շախմատային խնդիրների լուծման տարբերակներ գտնելուն, սովորողների կոնվերգենտ և դիվերգենտ, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելուն:

| հհ | ԴԱՍ | ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ | ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ<br>Սովորողը կարողանում է... | Դասագիրք<br>Տետր էջեր |
|---|---|---|---|---|---|
| 1. | 1 | Ծանոթություն շախմատի հետ | Զևավորել պատկերացում շախմատի՝ որպես մտածողության զարգացման գործիքի մասին: Ներկայացնել շախմատի պատմությունը: Զևավորել դրական վերաբերմունք շախմատ առարկայի նկատմամբ: Ուսուցանել խաղաքարերի անվանումները, խաղադաշտի ճիշտ տեղադրումը: | Պատմել դրվագներ շախմատի ստեղծման մասին: Անվանել և ցուցադրել շախմատի խաղաքարերը, անսխալ տեղադրել խաղադաշտը: | Գիրք էջ.3-5<br>Տետր էջ.3 |
| 2. | 2 | Հորիզոնականներ և ուղղաձիգներ | Ուսուցանել հորիզոնական և ուղղաձիգ գծերը: | Անվանել և ցուցադրել հորիզոնական և ուղղաձիգ գծերը: | Գիրք էջ.6<br>Տետր էջ.4-5 |
| 3. | 3 | Դաշտերի անվանումները | Ուսուցանել լատիներեն a b c d e f g h տառերը: Ուսուցանել դաշտերը: | Անվանել a b c d e f g h լատիներեն տառերը:<br>Անվանել և ցույց տալ դաշտերը: | Գիրք էջ.7-8<br>Տետր էջ.6-7 |
| 4. | 4 | Անկյունագծեր | Ուսուցանել անկյունագծերը: | Անվանել և ցուցադրել անկյունագծերը: | Գիրք էջ.9<br>Տետր էջ.8 |
| 5. | 5 | Խաղադաշտի կառուցվածքը | Ուսուցանել շախմատի խաղադաշտի մասերը՝ կենտրոնը, թագուհու և արքայական թևերը, սպիտակների և սևերի կիսադաշտերը, եզրերը, անկյունները, սահմանային գիծը: | Անվանել և ցուցադրել շախմատային խաղադաշտի մասերը՝ կենտրոնը, թագուհու և արքայական թևերը, սպիտակների և սևերի կիսադաշտերը, եզրերը, անկյունները, սահմանային գիծը: | Գիրք էջ.10<br>Տետր էջ.9-10 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | 6 | Խաղաֆարերի սկզբնական դասավորությունը | Ուսուցանել խաղաֆարերի սկզբնական դասավորությունը: | Դասավորել խաղաֆարերը սկզբնական դիրքով: | Գիրք էջ.6-7<br>Տետր էջ.11-12 |
| 7. | 7-8 | Արքա | Ուսուցանել արքա խաղաֆարի արժեքը, դերը, քայլը:<br>Ուսուցանել արքա խաղաֆարի 2 կանոնները: | Պատմել արքայի դերի մասին:<br>Կատարել քայլեր արքայով:<br>Սահմանել արքա խաղաֆարի 2 կանոնները: | Գիրք էջ.13-16<br>Տետր էջ.7-8 |
| 8. | 9-10 | Թագուհի | Ուսուցանել թագուհի խաղաֆարի արժեքը, դերը, քայլը:<br>Ուսուցանել թագուհիով միաժամանակյա հարձակումը: | Պատմել թագուհու դերի, արժեքի մասին:<br>Կատարել քայլեր թագուհիով:<br>Կատարել քայլեր թագուհիով՝ միաժամանակ հարձակվելով երկու խաղաֆարի վրա: | Գիրք էջ.17-20<br>Տետր էջ.15-16 |
| 9. | 11-12 | Շախ | Ուսուցանել շախը, շախից ազատվելու ձևերը: | Սահմանել շախը, շախ տալ, ցույց տալ շախից ազատվելու ձևերը: | Գիրք էջ.21-24<br>Տետր էջ.17-20 |
| 10 | 13 | Շախ և մատ | Ուսուցանել մատը: | Սահմանել մատը, մատ անել, ցույց տալ՝ ինչպես պաշտպանվել մատից: | Գիրք էջ.25-26<br>Տետր էջ.21-22 |
| 11 | 14 | Քայլ դեպի մատ | Ամրապնդել մատ անելու հմտությունները: | Մատ անել, ցույց տալ՝ ինչպես պաշտպանվել մատից: | Գիրք էջ.27-28<br>Տետր էջ.23-25 |
| 12 | 15 | Պատ | Ուսուցանել պատը | Սահմանել պատը, պատ անել, ցույց տալ՝ ինչպես խուսափել պատից: | Գիրք էջ.29-31<br>Տետր էջ.26-27 |
| 13 | 16-17 | Նավակ | Ուսուցանել նավակ խաղաֆարի՝ արժեքը, դերը, քայլը: | Պատմել նավակի դերի, արժեքի մասին:<br>Կատարել քայլեր նավակով:<br>Կատարել կրկնակի հարված նավակով: | Գիրք էջ.32-36<br>Տետր էջ.28-31 |
| 14 | 18 | Դաս-մրցույթ<br>Մատ 1 քայլից | Մրցույթի միջոցով կատարել ամփոփում և ձևավորող գնահատում՝ խաղադաշտ, արքա, թագուհի, նավակ, շախ, մատ և պատ թեմաներից: | Ստեղծել մատ 1 քայլից: | Տետր էջ.31 |
| 15 | 19-20 | Փիղ | Ուսուցանել փիղ խաղաֆարի՝ արժեքը, դերը, քայլը: | Պատմել փղի դերի, արժեքի մասին:<br>Կատարել քայլեր փղով: | Գիրք էջ.37-40<br>Տետր էջ.32-35 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Կատարել կրկնակի հարված փղով: | |
| 16 | 21-23 | Ձի | Ուսուցանել ձի խաղաքարի՝ արժեքը, դերը, քայլը: | Պատմել ձիու դերի, արժեքի մասին:<br>Կատարել քայլեր ձիով:<br>Կատարել կրկնակի հարված «պատառաքաղ» ձիով: | Գիրք էջ.41-45<br>Տետր էջ.36-40 |
| 17 | 24 | Դաս-մրցույթ<br>Մատ **1** քայլից | Մրցույթի միջոցով կատարել ամփոփում և ձևավորող գնահատում՝ խաղադաշտ, արքա, թագուհի, նավակ, փիղ, ձի, շախ, մատ և պատ թեմաներից: | Ստեղծել մատ **1** քայլից: | Տետր էջ.41 |
| 18 | 25-26 | Զինվոր | Ուսուցանել զինվոր խաղաքարի՝ արժեքը, դերը, քայլը: | Պատմել զինվորի դերի, արժեքի մասին:<br>Կատարել քայլեր զինվորով:<br>Կատարել կրկնակի հարված «պատառաքաղ» զինվորով: | Գիրք էջ.46-49<br>Տետր էջ.43-44 |
| 19 | 27 | Դաս-մրցույթ Մատային դիրքերի ստեղծման | Մրցույթի միջոցով ուսուցիչը զարգացնում է ստեղծագործական մրածողությունը, նաև կատարել ամփոփում և ձևավորող գնահատում՝ խաղադաշտ, արքա, թագուհի, նավակ, փիղ, ձի, զինվոր, շախ, մատ և պատ թեմաներից: | Ստեղծել մատային դիրքեր: | Տետր էջ.45 |
| 20 | 28 | Զինվորի փոխարկումը | Ուսուցանել զինվորի փոխարկումը: | Փոխարկում է զինվորը այլ խաղաքարի, ելնելով իրավիճակից: | Գիրք էջ.50-52<br>Տետր էջ.46-47 |
| 21 | 29-30 | Կողանցիկ վերցնելը | Ուսուցանել կողանցիկ վերցնելը: | Մեկնաբանում է կողանցիկ վերցնելը, ցույց է տալիս: | Գիրք էջ.53-56<br>Տետր էջ.48-51 |
| 22 | 31 | Կրկնություն | Կրկնության կազմակերպում վիկտորինայի միջոցով: | Պատասխանում է հարցերին, ցույց է տալիս ցուցադրական խաղադաշտին օրինակներ: | |
| 23 | 32 | Դաս-մրցույթ Մատային դիրքերի ստեղծման | Մրցույթի միջոցով ուսուցիչը զարգացնում է ստեղծագործական մրածողությունը, նաև կատարել ամփոփում և ձևավորող գնահատում՝ խաղադաշտ, արքա, թագուհի, նավակ, փիղ, ձի, զինվոր, շախ, մատ և պատ թեմաներից: | Ստեղծել մատային դիրքեր: | Տետր էջ.45<br>Կարելի է նորից օգտվել 45 էջի նմուշներից, ավելացնելով զինվորներ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 24 | 33-34 | Փոխատեղում | Ուսուցանել փոխատեղումը, նպատակը, կանոնները: | **Բացատրել** փոխատեղման նպատակը և կանոնները: | Գիրք էջ.57-60 Տետր էջ.48-51 |
| 25 | 35 | Սկզբնախաղի հիմունքները | Ուսուցանել խաղը վարելու հիմունքները սկզբնախաղում: | **Բացատրել** խաղը վարելու հիմունքները, **կիրառում է** դրանք: | Գիրք էջ.61 Տետր էջ.48-51 |
| 26 | 36 | Թեմատիկ խաղի դաս Սկզբնախաղի հիմունքները» | Ստացած գիտելիքը կիրառելու հնարավորության ստեղծում: | Կիրառում է սկզբնախաղի հիմունքները խաղում: | Թեմատիկ խաղ «Սկզբնախաղի հիմունքներ» |
| 27 | 37-38 | Մանկական մատ | Ուսուցանել մանկական մատը: | Մեկնաբանում է և իրականացնում է մանկական մատ: | Գիրք էջ.62-65 Տետր էջ.55-58 |
| 28 | 39 | Կապ | Ուղղորդել՝ տարբեր իրավիճակներում որոնել, գտնել և կիրառել մարտավարական հնարքներ: Ուսուցանել «կապ» մարտավարական հնարքը: | **Ցույց տալ** և **բացատրել** մարտավարական հնարքը, **կիրառել** այն: | Գիրք էջ.66-67 Տետր էջ.59 |
| 29 | 40 | Դաս-մրցույթ. Դիրքերի ստեղծում կապ մարտավարական հնարքով | Ստեղծել ստեղծագործական միջավայր, ուղղորդել սովորողներին ինքնուրույն ստեղծագործելու մարտավարական հնարք կապը: | **Ստեղծել** մարտավարական հնարք կապը 3 և ավելի խաղաքարերով : | Տետր էջ.60 |
| 30 | 41 | Միջնախաղի հիմունքները | Ուսուցանել խաղը վարելու հիմունքները միջնախաղում: | **Բացատրել** միջնախաղում խաղը վարելու հիմունքները, կիրառել դրանք: | Գիրք էջ.68-69 |
| 31 | 42 | Թեմատիկ խաղի դաս Միջնախաղի հիմունքները» | Ստացած գիտելիքը կիրառելու հնարավորության ստեղծում: | Կիրառում է միջնախաղի հիմունքները խաղում: | Թեմատիկ խաղ «Միջնախաղի հիմունքներ» |
| 32 | 43 | Քայլի գրանցումը | Ուսուցանել քայլի գրանցումը: | Տեղորոշում և գրանցում է շախմատային քայլերը: | Գիրք էջ.70-71 Տետր էջ.61-62 |
| 33 | 44 | Կրկնակի հարված պատառաքաղ | Ուղղորդել՝ տարբեր իրավիճակներում որոնել, գտնել և կիրառել մարտավարական հնարքներ: | **Ցույց տալ** և **բացատրել** մարտավարական հնարքը, **կիրառել** այն: | Գիրք էջ.72-73 Տետր էջ.63 |
| 34 | 45 | Դաս-մրցույթ. Կրկնակի հարված մարտավարական հնարքով դիրքերի ստեղծում | Ստեղծել ստեղծագործական միջավայր, ուղղորդել սովորողներին ինքնուրույն ստեղծագործելու մարտավարական հնարք կրկնակի հարվածով դիրքեր ստեղծելուն: | Ստեղծել մարտավարական հնարք կրկնակի հարված 3 խաղաքարերով: | Տետր էջ.64 |
| 35 | 46 | Ոչ-ոքին շախմատում, հավերժական շախ | Ուսուցանել ոչ-ոքին: | **Սահմանել** հավերժական շախը, **ցույց տալ**՝ ինչպես հավերժական շախ տալ: | Գիրք էջ.74-75 Տետր էջ.65 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Ձևավորել անելանելի իրավիճակներում ելքեր փնտրելու հմտություններ: | | |
| 36 | 47 | Վերջնախաղի հիմունքները | Ուսուցանել խաղը վարելու հիմունքները վերջնախաղում: | **Բացատրում է** խաղը վարելու սկզբունքները, **կիրառում** է խաղում: | Գիրք էջ.76 |
| 37 | 48 | Թեմատիկ խաղի դաս «Վերջնախաղի հիմունքները» | Ստացած գիտելիքը կիրառելու հնարավորության ստեղծում: | Կիրառում է վերջնախաղի հիմունքները խաղում: | Թեմատիկ խաղ «Վերջնախաղի հիմունքները» |
| 38 | 49 | Մատ թագուհիով և նավակով | Ուսուցանել թագուհիով և նավակով մատը: Ձևավորել սովորողների մոտ պլանավորման նախագիտելիքներ: | **Բացատրել**, **ցույց տալ** թագուհու և նավակի համագործակցային քայլերը և **ստեղծել** մատային դիրքեր: | Գիրք էջ.77 Տետր էջ.67 |
| 39 | 50-51 | Մատ 2 նավակով | Ուսուցանել 2 նավակով մատը: | **Բացատրել**, ցույց տալ երկու նավակների համագործակցային քայլերը և **ստեղծել** մատային դիրքեր: | Գիրք էջ.78-82 Տետր էջ.40-41 |
| 40 | 52 | Փոխանակում: Խաղաքարերի մոտավոր արժեքները | Ուսուցանել խաղաքարերի մոտավոր արժեքներով կատարել համարժեք, կամ շահավետ փոխանակումներ: | Թվարկել խաղաքարերի մոտավոր արժեքները, կատարել փոխանակումներ: | Գիրք էջ.83-84 Տետր էջ.69 |
| 41 | 53-55 | Պաշտպանություն | Սովորողների միջոցով բացահայտել պաշտպանական հնարավորությունները: | Որոնում և գտնում է խնդիրը, գտնում է ուղիներ խնդրի լուծման համար: | Գիրք էջ.85-90 Տետր էջ.70-72 |
| 42 | 56-57 | Մատ վերջին հորիզոնականում | Ուղղորդել՝ տարբեր իրավիճակներում որոնել, գտնել և կիրառել մարտավարական հնարքներ: | Որոնում և գտնում է մարտավարական հնարքը, իրականացնում է այն: | Գիրք էջ.91-94 Տետր էջ.73 |
| 43 | 58-60 | Գործնական խաղ | Գործնական խաղի միջոցով ամրապնդել սովորողների գիտելիքները: Ձևավորել մտածված որոշումներ ընդունելու հմտություններ, ձևավորել ինքնուրույն ուշադրությունը կենտրոնացնելու, հույզերը կառավարելու, մրցակցին ապրումակցելու կարողություններ: | Պահպանելով խաղը վարելու հիմունքները ցուցադրում է տրամաբանված խաղ: | |
| 44 | 61-64 | Գործնական խաղ Ներդասարանական և ներդպրոցական խաղեր | Խաղերի միջոցով սովորողների մոտ ձևավորել թիմային մտածողություն, համագործակցելու, ապրումակցելու, ազնիվ պայքարելու հմտություններ: | Պահպանելով խաղը վարելու հիմունքները ցուցադրում է տրամաբանված խաղ: | |